ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ

2024թ. հուլիսի 8 -ին, N 247 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՂԱԶԱՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԹԱՄԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման հավելված 3-ի 61-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի *N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և ՀՀ Արագածոտնի մարզի* «Ղազարավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Թ. Սարգսյանի 2024 թվականի հուլիսի 4-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1.ՀՀ Արագածոտնի մարզի «Ղազարավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Թամարա Սարգսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 11-ից օգոստոսի 14-ը ներառյալ:

2. Թամարա Սարգսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ղազարավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Ղազարավանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Սաթենիկ Մկրտչյանի վրա:

3. Թամարա Սարգսյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի օգոստոսի 15-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 09.07.2024 12:28:48 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309899457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ